

## ՊԱՏԱՍԽԱՆ՝ ԽՈՇՈՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՐՑԱՇԱՐԻՆ

(հարցաշար՝ հասարակական կազմակերպությունների եւ լայն շրջանակների համար)

### Պատասխանող կազմակերպություն՝ «Ուրբան» Հիմնադրամ

- 1. Խոշորացման գործընթացի վերաբերյալ ինչպիսի՞ն է Ձեր դիրքորոշումը: Ձեր կարծիքով՝ կարող է այն լուրջ հիմքեր ստեղծել տեղական ինքնակառավարման համակարգի եւ տարածքների հետագա զարգացման համար:**

Համարում ենք, որ ընդհանրապես, տեղական ինքնակառավարման ոլորտում բարեփոխումները անխուսափելի են, քանի որ ներկայիս համակարգը զարգանալու ռեսուրս այլևս չունի: Խոշորացման մոտեցումը ոլորտը բարեփոխելու ուղիներից մեկն է. ավելի խոշոր համայնքները զարգանալու ավելի մեծ հնարավորություն կունենան, հետաքրքիր կլինեն բիզնեսի, ծառայություն մատուցողների համար, հնարավոր կլինի գործունեություն ծավալել նոր ոլորտներում՝ մասշտաբի էֆեկտի շնորհիվ: Սա իր հերթին կհանգեցնի ամենակարևոր խնդրի՝ բնակչությանը մատուցվող ծառայությունների որակի բարձրացման խնդրի լուծմանը:

Սակայն գտնում ենք, որ խոշորացումը չպետք է դիտարկվի որպես ոլորտի բարեփոխման միակ մոտեցում, համայնքները, մեր կարծիքով, պետք է ունենան այլընտրանքային տարբերակ, որը կարող է լինել միջհամայնքային միավորումների ստեղծումը: Այն պետք է խթանվի խոշորացման մոտեցման հետ զուգընթաց և փոխարինաբար փորձարկվի խոշորացման մոդելի հետ միասին՝ հաշվի առնելով Հայաստանին բնորոշ բազմաթիվ առանձնահատկություններ:

Համարելով ոլորտի բարեփոխումներն անհրաժեշտ՝ միաժամանակ առանցքային ենք համարում դրանց իրականացման ձևերի և մեթոդների ճիշտ ընտրությունը, հստակ ճանապարհային քարտեզի մշակումը, որի իրականացման հետևանքները կանխատեսելի և կառավարելի կլինեն և որոնք առավելագույն հանրային աջակցություն կապահովեն բարեփոխումների համար:

- 2. Առաջարկվում է խոշորացման երկու մոդել՝ «փնջային» եւ «շրջանային»: Ծանոթ եք այս մոդելներին, դրանցից որն եք առավել արդյունավետ համարում մեր երկրի դեպքում:**

Նախընտրում ենք «շրջանային» մոդելը, քանի որ շատ համայնքների բնակիչների ընկալումները բացասական են իրենց ինքնության կորստի մտավախությունից: «Ուրբան» հիմնադրամի վերջերս իրականացրած ուսումնասիրության արդյունքում

պարզվեց, որ համայնքները կգերադասեն ավելի «խոշոր» խոշորացում, ինչի շնորհիվ հնարավոր կլինի հաղթահարել բարեփոխումների նկատմամբ ամենագործուն դիմադրությունը՝ ի դեմս տեղայնամոլության: Բացի այդ, շրջանայինի դեպքում ավելի մեծ հնարավորություններ կստեղծվեն տարածքային զարգացման համար:

**3. Ի՞նչ կարևոր ռիսկեր եք տեսնում գործընթացն իրականացնելիս եւ ի՞նչ քայլերով է հնարավոր դրանք չեզոքացնել:**

Նախ, խոշորացման յուրաքանչյուր դեպքի պետք է անհատական մոտեցում ցուցաբերել՝ հաշվեգրելով կոնկրետ խնդիրները: Ապա անհրաժեշտ է ապահովել լիարժեք տեղեկատվություն բոլոր համայնքների բնակիչների համար՝ երկխոսության հնարավորությամբ: Խստորեն հետևել տեղական ժողովրդավարության սկզբունքներին ու գործընթացներին ապահովելու համար բոլոր բնակիչների հավասար իրավունքը բարձրաձայնելու, մասնակցելու խնդիրների ձևակերպման, որոշումների քննարկման, վերահսկման ու վերանայման փուլերին:

Անչափ կարևոր է նաև ներկայացնել ֆիզիկական ենթակառուցվածքների, ծառայությունների մատչելիության սպասվող փոփոխությունները և երաշխիքները այն ռեսուրսների առկայության, որոնց միջոցով կիրականացվեն այդ փոփոխությունները:

Մեր կարծիքով հատուկ մոտեցում պետք է ցուցաբերվի սահմանամերձ բնակավայրերի նկատմամբ: Ամենատեսանելի տարբերակը դրանք խոշորացման կամ բարեփոխումների որևէ այլ սխեմաներում չընդգրկելն է, այլ հատուկ ծրագրի մշակումը այդ գոտու համար, որի հնարավոր դատարկումը կարող է առաջ բերել ազգային անվտանգության խնդիր:

Գտնում ենք, որ պետք է խուսափել միաժամանակյա համատարած, առավել ևս, «շոկային» բարեփոխումից (մանավանդ խոշորացման տարբերակի դեպքում), որը կարող է առաջացնել համատարած հանրային դժգոհության ալիք, որի հետևանքները գուցե ավելի դժվար կլինի հաղթահարել:

**4. Առաջարկվող մոդելներով արդյոք արդյունավետ մեխանիզմներ ստեղծված են տեղական իշխանությունների օտարումը բնակչությունից բացառելու համար: Ի՞նչ նոր մեխանիզմներ կմատնանշեք բնակչություն-տեղական իշխանություն կապը արդյունավետ դարձնելու համար:**

Ստեղծված են, սակայն կանոնակարգված գործընթացներից բացի անհրաժեշտ է տեղական ժողովրդավարության մշակույթ ձևավորել ՏԻՄ-երում, մասնակցային կառավարումը դարձնել կիրառվող, այլ ոչ թե ձևական գործընթաց: Ավելի կոնկրետ՝

հանրությանը հետաքրքրող յուրաքանչյուր որոշում պետք է ընդունվի մասնակցային եղանակով: ՏԻՄ-երը ոչ միայն չունեն նման կարողություններ, այլ նաև շատերը դեռևս չեն ըմբռնել դրա նշանակությունը: Առաջարկում ենք պահպանել և ավելի խթանել և զարգացնել շատ համայնքներում ստեղծված համայնքային ոչ ֆորմալ ակտիվ խմբերը՝ ներառյալ երիտասարդական խմբերը և տարածել դրանք այլ համայնքներում: Այս գործում ողջամիտ կլինի համագործակցել համայնքների հետ աշխատող հասարակական կազմակերպությունների հետ, որոնք ամենօրյա շփում ունեն համայնքների հետ և ունեն գործընկերների լայն ցանց ամբողջ հանրապետությունով լավագույն փորձը բնակչության շրջանում տարածելու համար: Այս նպատակով առաջակվում է կիրառել սոցիալական գործընկերության մոդելը, պետական բյուջեի հաշվին որոշ լիազորություններ պատվիրակելով ՀԿ-ներին: Նման փորձ Հայաստանում գոյություն ունի, օրինակ, սոցիալական գործընկերությունը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերով նախարարության և Առաքելություն Հայաստան ՀԿ-ի միջև: Սա մի եղանակ է, որով բնակչությունը իրազեկ և մասնակից կլինին ինքնակառավարմանը:

Մյուս եղանակը, որով բնակչություն կարող է մասնակից դառնալ տեղական գործերին բարեփոխումներից հետո տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման հետագա խթանումն է: Սա իհարկե ունի բացասական կողմ՝ դեմ առ դեմ շփման բացակայություն, սակայն լուծում է իրազեկման և մասնակցության շատ խնդիրներ: Մյուս թույլ, բայց ոչ անհաղթահարելի, կողմը այս մոտեցման այն է, որ զգալի ռեսուրսներ պետք է ներդրվեն ինտերնետ հասանելիությունը առավելագույնի հասցնելու և բնակչության գիտելիքները տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում բարելավելու նպատակով:

**5. Արդյո՞ք տեղական հանրաքվեների արդյունքները պետք է որոշիչ լինեն այն դեպքում, երբ Սահմանդրության մեջ վերապահում է կատարված այդ մասով:**

Գտնում ենք, որ տեղական հանրաքվե անցկացնելը նպատակահարմար չէ այս փուլում՝ մեզանում ձևավորված քվեարկություն-ընտրության ոչ դրական պրակտիկայի, ուղղորդումների, դրանց բացասական ընկալումների պատճառով: Հետևաբար արդյունքները, թեև ոչ պարտադիր, կարող են իրական չլինել: Մինչդեռ քաղաքացիների տեսակետը պարզելու այլ, ավելի վստահելի մեթոդներ կան, ինչպես, օրինակ լայն ընտրանքով հարցումները, որոնց առաջարկությունները կարող են ուղեցույց հանդիսանալ հետագա գործողությունների համար:

6. Ձեր կարծիքով՝ բարեփոխումները կարո՞ղ են նպաստել առավել արդյունավետ, գործունե և կարող տեղական ինքնակառավարման մարմինների, մասնավորապես՝ ավագանու, ձեւավորման համար:

Միանշանակ՝ այո:

7. Ի՞նչ կարծիքի եք բնակավայրերի ընդհանուր ժողովի գաղափարի, համայնքի ղեկավարի ընտրության եղանակների (ուղղակի, թե անուղղակի) մասին:

Դրական ենք համարում համայնքում ցանկացած ներկայացուցչական մարմնի ստեղծման գաղափարը, սակայն ընթացակարգերը պետք է լրջորեն քննարկել խուսափելու համար հնարավոր անարդար ընթացքից: Օրինակ՝ ժողով վարողը կամ նախագահը կարող է լինի բոլորովին «օտար» անձ: Ժողովի կազմի ընտրության չափանիշների որոշումը նույնպես կարևոր է, այդ մարմնի հանրային ընկալման, նրա համար հանրության աջակցություն ապահովելու տեսանկյունից: Այնտեղ պետք է ներկայացված լինեն ոչ միայն բնակավայրի տարածքում գտնվող պետական հաստատությունների ներկայացուցիչները, այլև հանրության բոլոր շերտերը՝ բնակչություն՝ տարեց, երիտասարդ, կանայք, հանրային սեկտոր, բիզնես սեկտոր, հասարակական սեկտոր և այլն:

Համամասնական ընտրակարգով անուղղակի ընտրությունները, մեր կարծիքով կլինեն նախընտրելի տարբերակ՝ խուսափելու համար նեղ համայնքային, անձնական շահին նախապատվություն տալու հավանականությունից և հնարավորություն տալու շահած կուսակցություններին իրենց լիդերներին առաջադրելուց, որոնք գոնե տեսականորեն կարող են համայնքի ղեկավարի պաշտոնին ավելի համապատասխան որակներ ունենալ՝ որպես լիդեր, քան բուն բնակավայրից առաջադրված թեկնածուները: Այս դեպքում հստակ կապ պետք է լինի ազգային և տեղական ընտրությունների միջև, այնպես որ մեծամասնության կուսակցության անհաջողությունը տեղական ընտրություններում, որը ըստ էության փոխում է ուժերի հարաբերակցությունը երկրում, ազդի ազգային ընտրությունների արդյունքում ձևավորված ուժերի հարաբերակցության վրա՝ ընդհուպ մինչև կառավարության փոփոխությունը:

Սակայն այս փուլում դա վաղարժամ է, հայտնի փաստ է, որ քաղաքական կուսակցություններին համայնքին ընտրությունները հետաքրքիր չեն այնքանով, որ պարարտ հող չկա նրանց գործունեության համար՝ պայմանավորված նեղ անձնական, տեղական էլիտայի շահերի դոմինանտությամբ, ինչը կարող է չեզոքացվել բազմաբնակավայր և ավելի շատ բնակչություն ունեցող համայնքներում: Կարելի է մինչև

բարեփոխված համայնքի կայացումը մեծամասնական ընտրակարգը՝ ուղղակի ընտրությամբ՝ աստիճանաբար անցնելով համամասնական ընտրակարգին:

**8. Ձեր գնահատմամբ՝ ի՞նչ առաջնահերթ քայլեր պետք է իրականացնի գործընթացի պատասխանատու մարմինը՝ բարեփոխումների հաջողությունն ապահովելու համար:**

Հստակ մոտեցման, մեթոդաբանության մշակում և կանխատեսելի (հետևանքներով) քայլերի մշակում՝ փորձագետների ներգրավմամբ, դրանց տարածում հանրության շրջանում, բոլոր բնակիչների համար գործընթացի մեջ ներգրավվելու հնարավորության ստեղծում, խնդիրների անկեղծ ու բաց քննարկում բնակիչների հետ, գործընթացի պարբերաբար ու անկողմնակալ լուսաբանում, համակիր համայնքների բացահայտում փորձնական ծրագրի համար, առաջին փորձնական բարեփոխված համայնքների հետ կապված ծախսերի մանրակրկիտ հաշվարկ և ֆինանսակվորման աղբյուրների երաշխավորում, մեկ տարի հետո արդյունքների վերանայում բարեփոխված համայնքներում, արդյունքների տարածում, կոմպետենտ լրագրողների, հասարակական կազմակերպությունների ցանցերի, համայնքային ժողովների, ոլորտի միջազգային ծրագրերի միջոցով:

**9. Ինչպիսի՞ն են Ձեր առաջարկությունները հանրային իրազեկման աշխատանքների կազմակերպման վերաբերյալ:**

«Ուրբան» հիմնադրամի ուսումնասիրությունները ցույց են տվել, որ, հաշվի առնելով բարեփոխումների հետ կապված հարցադրումների առատությունը, մարդիկ գերադասում են իրազեկվել քաղաքականություն մշակողներից՝ անմիջական փոխշփման ռեժիմում: Նրանք նշում են նաև հեռուստատեսությունը որպես տեղեկատվություն ստանալու իրենց հիմնական աղբյուր: Այդ պատճառով անհրաժեշտ է աջակցել մարզային հեռուստատեսություններին համապատասխան կարողություններ ձեռք բերելու հարցում՝ բարեփոխումների ինֆորմացիոն ուղեկցումը պատշաճ իրականացնելու համար: Մակայն արդյունավետ հանրային իրազեկում իրականացնելու համար անհրաժեշտ է մշակել հաղորդակցման ռազմավարություն, ինչը թույլ կտա բնակչության իրազեկումը կատարել ոչ թե պահի թելադրանքով որպես առանձին-առանձին միջոցառումներ, այլ համակարգված և պլանավորված որոշակի ժամանակահատվածի (օր.՝ 1 տարի) համար: Անհրաժեշտ է շարունակական համագործակցություն ձևավորել մարզային և տեղական լրատվամիջոցների ու ՔՀԿ-ների հետ, ինչը կլինի նաև տեղական ժողովրդավարության խթանման գրավական:

**10. Արդյո՞ք այսօր երկիրը պատրաստ է նման բարեփոխումների եւ եթե այո, դրանց իրականացման ինչպիսի՞ ժամկետներ և եղանակներ (փուլային, միաժամանակյա և այլն) կառաջարկեիք:**

Միանշանակ պետք է սկսել բարեփոխումները, սակայն գտնում ենք, որ պետք է խուսափել միաժամանակյա համատարած, առավել ևս, «շոկային» բարեփոխումից (մանավանդ խոշորացման տարբերակի դեպքում), որը կարող է առաջացնել համատարած հանրային դժգոհության ալիք, որի հետևանքները գուցե ավելի դժվար կլինի հաղթահարել: Կարծում ենք, պետք է շարժվել փուլային/փորձնական տարբերակով, դիտարկել արդյունքները, որոշ ժամանակ անց վերլուծել, վերանայել, քաղած դասերը, շեշտադրել և տարածել բարեփոխված համայնքների առավելությունները, ձեռք բերել վստահություն և ավելի շատ համակիրներ, օգտագործել փորձնական փուլի արդյունքները հաջորդ փուլերի համար ավելի սահուն ընթացքի համար: Սա այն նախապատրաստական փուլն է, որը երկիրը կդարձնի ավելի պատրաստ բարեփոխումներին: Մեր կարծիքով տեղական ինքնակառավարման ոլորտի բարեփոխումները գործընթաց է, որի տևողությունը կախված է հստակ մշակված մեթոդաբանության, իրականացման իրատեսական, կանխատեսելի քայլերի և երաշխավորված անհրաժեշտ ռեսուրսների առկայությունից: Պետք է պատրաստ լինել, որ այն կարող է հարաբերականորեն երկար, փուլային գործընթաց լինել: